Դատարանը, նկատի ունենալով նաև, որ սույն քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ ծախսեր չեն առաջացել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, ևս պետք է համարել լուծված:

4. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ԼԵՎԱՆ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզպետարանի՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կարիքների համար հայտարարված թիվ ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/09 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 29-րդ չափաբաժնով հայցվորի հայտը հրավերի պահանջներին համապասխանող գնահատելու և հայցվորին ընտրված մասնակից ճանաչելու որոշումները անվավեր ճանաչելու պահանջի մասին **հայցը բավարարել.**

2. անվավեր ճանաչել ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/09 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կարիքների համար հայտարարված թիվ ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/09 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 29-րդ չափաբաժնով <<ԼԵՎԱՆ>> ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապասխանող գնահատելու և հայցվորին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումները:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր

կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

6. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IED2-B4D9-45AE-B187 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am